# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար ներքին աուդիտի ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-23/04» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «18» հոկտեմբերի 2023թ.

ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Նաիրի Գալստյան՝** Դատական դեպարտամենտի ղեկավարի առաջին տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար, Դատական դեպարտամենտի ղեկավարի պարտականությունները կատարող

*հանձնաժողովի անդամներ՝*

**Արշակ Վարդապետյան՝** Դատական դեպարտամենտի ղեկավարի ֆինանսատնտեսական հարցերով տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար

**Արեն Մեսրոպյան՝** Բարձրագույն դատական խորհրդի նախագահի խորհրդական

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Գայանե Դադիվանյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Նիստից բացակայում էր՝

**Արուս Հայրապետյան՝** Դատական դեպարտամենտի ղեկավարի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար

**1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-23/04» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.**

- հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 11-րդ օրվա (16.10.2023թ.)՝ ժամը 11:00-ն,
- հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,
- էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 17.10.2023թ.՝ ժամը 11:00-ին:

**2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայության գնման գնի վերաբերյալ.**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության գնման գինը.

| Չափաբաժնի համարը | Չափաբաժնի անվանումը | Գնման հայտով սահմանված գնման գինը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 1 | Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտի ներքին աուդիտի ծառայություն | 3600000 |

**3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝**

| Մասնակցի անվանումը (անունը) | Մասնակցի գործունեության հասցեն |
|---|---|
| Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ | Արգիշտի 7, Դոմ Մոսկվի, ք. Երևան, ՀՀ |
| ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ ՍՊԸ | ք. Երևան, Նորագավիթ 13 փողոց, տուն 21/1 |
| Ֆոր Էյ Քնսալթինգ ՓԲԸ | ք. Երևան, Նալբանդյան 50/136 |

**4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.**

Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

**5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

**6. «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-23/04» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.**

| Չ/Հ | Մասնակցի անվանումը (անունը) | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Մասնակցի կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Արժեք (ՀՀ դրամ) | ԱԱՀ | Գին (ՀՀ դրամ) | Արժեք (ՀՀ դրամ) | ԱԱՀ | Գին (ՀՀ դրամ) | |
| 1 | Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ | 3000000 | 20% | 3600000 | 3000000 | 20% | 3600000 | Մերժված |
| 1 | ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ ՍՊԸ | 3000000 | 20% | 3600000 | 3000000 | 20% | 3600000 | Մերժված |
| 1 | Ֆոր Էյ Քնսալթինգ ՓԲԸ | 3000000 | 20% | 3600000 | 3000000 | 20% | 3600000 | Մերժված |

Էլեկտրոնային հակադարձ աճուրդն ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 17.10.2023թ.՝ ժամը 11:30-ին:

**7. Տվյալներ՝ մերժված հայտերի և «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-23/04» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ.**

Աճուրդն ամփոփվելու պահին Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ-ի, ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ ՍՊԸ-ի և Ֆոր Էյ Քնսալթինգ ՓԲԸ-ի կողմից ներկայացված մինիմալ գները կրկնվել են, ուստի Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ-ի, ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ ՍՊԸ-ի, Ֆոր Էյ Քնսալթինգ ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտերը Համակարգի կողմից համարվել են մերժված:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց.

- «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-23/04» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ________________ Նաիրի Գալստյան

Անդամներ՝ ________________ Արշակ Վարդապետյան

________________ Արեն Մեսրոպյան

Քարտուղար՝ ________________ Գայանե Դադիվանյան